

նոնաւոր ժամադրութեամբ և խնամքով . իսկ չորս-հինգ-վեց տարեկան երեխայից համար ալ՝ յարմար տեղւոյ մէջ և յարմարաւոր անձինքներու խնամոց ներքեւ և ամէն պէտք եղած կազմակերպութիւններով՝ բացուին կրթարան Մարդկոցներ կամ Մանկապարտէզներ, ուր կրթուին և պատրաստուին ապագայ մարդկութեան երջանիկ սերունդ մը :

Բայց բիւր և բիւր երանի՜ ձեզի, ո՛վ բարեբախտ մանկիկներ, որ աչքերնիդ լոյս աշխարհի մէջ կը բանաց այնպիսի գերդաստանի մը մէջ, որուն ծնողքը ազնուաբարոյ և կրօնասէր, անձնանուէր և որդեսէր բլլալու համար՝ պէտք չունին հոգեւոր պաշտօնէից յորդորակներուն և ուսուցչութեան, և որոնց ընտանի յարկը իրենց զաւակներէն ձեւացած սքանչելի հոգեծա-

ղիկ մանկիկներու ճշմարիտ ծաղկոց մ'է, որուն մէջ չար օրինակներէ հեռու՝ ամենօրեայ դասառութիւն մ'ունիք ազնուաբարոյ շարժմանց, խօսքի ու գործոց . . . Դուք, ո՛վ երջանկաբաստ փոքրիկներ, ներկայիս ձեր ծնողաց և ապագային ալ անոնց հետ միասին՝ ընդհանուր մարդկութեան երջանկութիւնը պիտի ըլլաք, և անոր վատթարութեան մէջ մեծցած թշուառ զաւակները պիտի մխիթարէք՝ մարդկութեան օգտին համար, և յատկապէս ձեր ազգայնոց օգտին համար ի գործ դնելիք ձեր անձնանուիրութիւններով . . . Ո՛հ, ձեր ծնունդը, ձեր երեխայութեան շրջանը՝ քնապիտի չկոչեմ ես ՎԱՅՆ — ԱՌԱՋԻՆ, այլ ՎԱՇՆ — ԱՌԱՋԻՆ :

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

Ա Ռ Ա Յ

Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ա Յ Պ Ա Տ Ա Ն Ի Ն Ե Ր

Ձմեռ ատեն՝ ձիւնը առատ բարդ է բարդ
Ծածկեց երկիր հասար ու հարթ .
Որուն արծաթ փռւոյն վերայ երկնավառ,
Շողան ակունք անհամար :
Մի քանի լուրջ պատանիներ
Ձիւնն ուղեւով անել իրենաց շահարեր,
Ժողովեցան ի մի խումբ,
Առին ակումբ :
Նոցամէ մինն աւելի փորձ՝ ընդունակ,
Ասաց — « Ի՛նչ գի՛ք ա՛ արջաք :
Արե՛ք՝ ձիւնէն շինենք՝ ազատ ժամանակ :
Մի հոյակապ աշտարակ :
Թո՛ղ մեր ծննդք տեսնեն՝ որ մենք չեմք անփորձ,
Կանգնել, կերտել, ըստեղծել գործ » :
Ուրիշ մ'ասաց — « Ինչո՞ւ քարձըր աշտարակ .
Կ'ուզե՞ն որ մենք Բարեկեցի պէս խալտառակ .
Շըրժե՛ք տապալ յերկիր կործան՝
Ֆիր ու քան :
Լաւ է, շինեմք չըբոյզ պալատ սինազարդ,
Տեսնէ ապշի առնէ մարդ » :
Երրորդ մ'ասաց — « Ի՛նչ ի՞նչ պաշտոն,
Լաւ է ամբողջ կամարապատ » :
Չորրորդն ասաց — « Ո՛հ, ի՞նչ ազատ՝ համարակ
Դուք կը շարքէք լայն և արձակ,
Այդպէս չուտով կ'ուզէ լինիլ սեռագործ,
Մի՛նչդեռ որ գու՛ք շատ տըգետ էք և անփորձ :
Աշխատեցէ՛ք՝ նախ ուրուագիծ մը շինել,

Ցատակագիծ գրե՛լ կազմել,
Չափել, հաշուել, անվերջապէ,
Որ ձեր գործը չըլնի դատարկ .
Ուստի թողունք մի քանի օր,
Պիտոյքները սարքներ բոլոր,
Յետոյ լինի՛ք թող ձեռնամուխ
Եւ քաջութեամբ հանենք զըլուխ » :
Հինգերորդը չըղիմացաւ, զարձաւ կերակ,
Եւ որոտաց . « Ի՛նչ կը խօսէք երկար բարակ,
Եթէ կ'ուզէք անել մի բան՝
Ի՛նչ կարիք կայ թողնել վաղուան » :
Սորա բողոքն անտես թողնել անուշադիր,
Եւ ըսկըսան զըրել երկար ծըրազիր,
Գրծեցին մեն յատակագիծ
Եւ օրերով կից առ կից՝
Նըստան, խորհեցան, հաշուեցին երկար,
Վիճեցին անվիթ, կըռկ անդադար,
Աճին մէկին խօսքին կէսը
Էր իւր և Եւր » :
Երկարեցին գործը մինչև այն ժամին,
Որ գարունը հասաւ, փընց տաք քամին,
Ձիւնն հալեցաւ կորաւ անհետ,
Ուրուագիծը մընաց անպէտ :

Խօսք և խորհուրդ երկար բարակ,
Շարեն միայն չըրեն կարգով,
Իսկ վըճական մի « եղիցի »
Կանգնէ չըբոյզ եկեղեցի . . . :

Ա. ՆԱԻԲՍԵԳԻԱՆ